

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Դաշինքն կամ Անեամ երկիրն ու անոր բնակիչը :

Վազինչին կամ Կննամ ըստւած կայսերութեան երկիրը՝ Հնդկա-Չինութերակղղւցն արևելեան մասին մէջ կ'իյնայ , ընդ մէջ  $8^{\circ} 25' - 23^{\circ}$  հիւսիսային լայնութեան և  $97^{\circ} 45' - 106^{\circ} 58'$  արևելեան երկայնութեան : Ըստ Ճանցուած չէ Եւրոպացւոցմէ այս աշխարհս , որ կը պարունակէ բնիկն Վազինչին կամ հարաւային Կննամի , և Վանքինի կամ հիւսիսային Կննամի վերցուած թագաւորութիւնները , և Վամպոձի թագաւորութե մէկ մասն ալ : Տարածութիւնն է գրեթէ 530,000 քառակուսի հազարամէջը . բնակչաց թիւը ումանք 5 միլիոնի , այլը 15 , և ուրիշներն ալ ինչուան 20 միլիոնի կը հանեն . բայց երկրորդ թիւը աւելի հաւանական կ'երևայ . մայրաքաղաքն է Հուե : Բնիկն Վազինչին լեռնային երկիր է . իսկ Վանքինի և Վամպոձի մէջ հողը ցած , հարթ և շատ բերրի է : Խիման շատ տաք է , բայց առողջարար . գլխաւոր գետերն են Մայ-Ռօնկ կամ Վամպոձ , Անկ-Ռօյ , և Այկուն : Ինդարձակ անտառներ ունի , որոնց մէջ ընտիր փայտեր ալ կան , ինչպէս եթենոս , հալուէ : Երկրագործութիւնը բաւականապէս ծաղկած է , և բերքերն են՝ բրինձ , մնացորեն , շաքարի եղէգ , և թթենւոյ ընդարձակ դաշտեր . մետաքսը երկրին գլխաւոր հարստութիւններուն մէկն է :

Իսկիուկեան աղանդը Վազինչինի աղնուականներուն կրօնքն է , իսկ Պուտտեան աղանդը՝ ժողովրդեան : Ամանապէս երկնից , երկրի , անտառներու , քամիներու , ջրերու և լեռանց պաշտօն կը մատուցանեն : Վրիստոնէից թիւը հիմա 500,000<sup>th</sup> կը համնի , որոնց առաջնորդութիւնը եւրոպացի քարոզչաց ձեռքն է . բայց շատ հալածանք և տան ջանք կը քաշեն հոնտեղի կառավարու-

թենէն , և այս պատճառաւ է որ հիմա գաղղիական և սպանիական պետութիւններն 'ի ձեռն զինուց կ'ուզեն բըռնադատել Վազինչինի կայսրը քրիստոնէութեան աղատութիւն տալու :

Կննամի բնակիչը քաղցր են բարուք , մարդասէր , աշխոյժ , զուարթ , և հիւրասէր . գողութեան ախտը շատ տարածուած է մէջերնին , բայց քիչ անգամ մարդասպանութիւն կ'ընեն : Վրտաքոյ կարգի պարծենկոտ են , և Չինացմէ ետքը իրենք զիրենք աշխարհիս առաջին ազգը կը համարին : Երբոր պատժոյ վախ չունին , խարդախ են , ստախօս , աներես , և պահանջող . բայց երբոր դիմացինն ընդդիմութիւն մը կամ համարձակութիւն ցուցընէ , մէկէն կը վախնան ետ կը քաշուին : Տգեղ են դէմքով . բայց մէջերնէն մեծ մասը աղտեղի ալ են , որ զգուելի կ'ընէ զիրենք : — Հագուստնին պարզ է . լայն թեւերով շապկի մը նման հանդերձ մը ունին ձերմակ մետաքսէ , որ ինչուան ծունկերնին կ'իջնայ , և ուրիշ մ' ալ անոր վրայէն , և ըստ եղանակին՝ անոնց թիւը կ'աւելցընեն . տափատնին զանազան գոյներով նիւթէ կ'ընտրեն : Վրտինին փակեղ կը գնեն , որուն նիւթը սե գունով շղարշ պիտի ըլլայ . երբոր սգոյ մէջ են , ձերմակ գունով կը գնեն : Լանանց հագուստն ալ քիչ շատ նման է ասոր , բայց աւելի թեթև : Հարուստները Չինաստանի և Վանքինի կերպաններով կը զարդարուին . նմանապէս հողաթափնին ալ Չինաստանէն եկած է : Ըստունակեալ անձրւներու միջոց՝ վաճառականները այն պիսի զգեստ մը կը հագնին , որով գործողութիւննին կընան անխափան առաջ տանիլ : Այս զգեստը արմաւենւոյ տերեւներէ յօրինուած է , ուսկից անձրւը չկրնար անցնիլ . վլուխնին ալ կողովի ձեռվլ գլխարկ մը կը գնեն , որ երկուքուկէս ոտքէ ինչուան իրեք ոտք տրամագիծ կ'ունենայ :

Կննակարաննին հողէ պատերով շինուած է , և կղմինտրով ծածկուած . բաւական ընդարձակութիւն ալ ունի :



**Բնիկք Գուշինչինի**

Անկողիննին փայտէ տախտակ մըն է՝  
զրեթէ մէկ ոտք բարձրութեամք, ո-  
րուն վրայ խսիր կը փուեն : Աննամի  
բնակչաց գլխաւոր կերակուրն է բրին-

ձը . հանդիսի օրեր փղի միս ալ կ'ու-  
տեն , որ սրբազն կերակուր մը համա-  
րուած է : Ոսվորական ըմպելիքն է տե-  
սակ մը թէյ , զոր իրենք կը մշակեն ,



### Օրիորդ Գոչինյինի

և որն որ Ախնաստանի թէյին համն ու  
անոյշ հոտը չունի : Ի՞ցէկ խաղող կը  
գտնուի իրենց երկիրը , բայց գինի չեն  
շիներ : Ի՞րնձէն տեսակ մը գարեջուր  
կը հանեն . նոյնպէս ուրիշ ըմպելիքներ  
ալ ունին :

Ի՞մէն զուարձութենէ աւելի Պաղին-  
չինացիք թատրոնական տեսարանները  
կ'ախորժին , որոնք կանոնաւոր թատր-  
երգութիւններ են . ասոնք միջերգներ՝<sup>1</sup>  
ալ ունին զուարժերգերով յօրինուած ,  
որոնց կը միաձայնին փողն ու թմբուկը

և ուրիշ գործիքներ : Կ'արեթէ ամէն  
թատրերկութեանց մէջ միմնսի մաս մը  
պէտք է գտնուի , զոր իրենք էական կը  
սեպէն : Ուրիշ մէկ զուարձութիւննին  
ալ վագրին կոհիւն է փղին հետ . թէպէտ  
վագրին ձիրանները կը փրցընեն և շըր-  
թունքներն ալ իրարու կարած անանկ  
ասպարեզ կը հանեն , ՚ի վերայ այսր ա-  
մենայնի շատ անգամ կը յաղթէ փղին :  
Որսորդութիւնն ալ շատ կը սիրեն , և  
փղեր որսալու ճարտար հնադրներ գի-  
տեն ու կը բանեցընեն . երբեմն քննե-  
լով իմանալով թէ փիղը գիշեր ատեն  
որ ծառին կը կոթընի , կ'երթան ար-

1. Գլ. Intermède.



### Զինուոր Գոչինչինի

մատին մօտ գրեթէ ամբողջ կը սզոցեն զան , և երբոր իրիկունը կու գայ կեն . դանին հանգչելու , ծառին վար իյնա լովզ իր հաւասարակշուռաթիւնը կը կոր սընցընէ գետին կ'իյնայ . ան ատեն որ սորդը վրան կը հասնի , և երկու էդ փղերու մէջ կը կապէ , որոնք իրենց

պատիճով ծեծելով զանիկայ՝ իրենց հետ մէկտեղ ախոռը կը տանին : Իշր բեմն ալ խորին փոս մը կը բանան և սատերով ու տերեւներով վրան կը ծած կեն . փիղը երբոր մէջը կ'իյնայ , անօ թութենէ կը ստիպուի հպատակելու որսորդին :

Օ ինուորական վիճակնին հետեւ և ամէն մարդ տասնըութը տարեկանէն ինչուան վախտսուն տարուան զինուորական ծառայութեան մանելու պարտական է՝ երբոր տէրութիւնը կանչելու ըլլայ : | Արաքանչիւր զինուոր իրեք տարի ծառայութիւն ընելէն ետքը՝ կրնայ իր տունը դաւնալ : | Հրոպական օրինօք կը կրթուին զինուորները , որոնց թոշակը ստակ և բրինձ է . նաև նապէս բերդերն ալ | Հրոպայի գրութեամբն յօրինուած են , որոնց մէջ անբար զէնք պահուած կան : | Օ ինուորաց հագուստը վայելուչ է . գլուխնին փակեղին վրայէն կօնածե սաղաւարտ մը կը դնեն . կարմիր մետաքսէ լայն թևերով երկայն բաձկրն մը կը հագնին , որինչուան ծնկուըները կը հասնի . ասոր վրայէն ըստ եղանակին՝ մէկ կամ երկու ուրիշ զգեստներ ալ կը հագուին , որոնք գեղին մետաքսէ կ'ըլլան , և առջի ըզգեստին կը նմանին , բայց միայն անլժե են : Զափատնին լայն է՝ կարմիր կամ սալիտակ մետաքսէ հասարակ կերպա սով մը շինուած : Չեռուընին հրացան կամ նիզակ կը բռնեն , և իրենց հրազինուց մեծ ինամ կը տանին :

Ղննամի բնակիչքն այնչափ յառաջա-  
դէմ չեն ճարտարութեան մէջ . բայց  
Խըրոպացւոց գործածներուն օրինակն  
առջևնին զբած՝ անոնց կը հետեւին .  
ինչու Հուկինաւարանին մէջ թնդա-  
նօթներ կը ձուլեն այսօրուան օրս :  
Հրացանները բոլոր Խըրոպայէն կու  
գան : Խաւական ճարտարապետութե-  
մէջ աւելի բարգաւաճ են . մասնաւո-  
րապէս իրենց շրջագայութեան նաւակ-  
ները շատ աղուոր , միանգամայն ամուր  
ալ են , և զարդարուն սակեզօծ դրուագ-  
ներով , որոնք վիշապներ ու օձեր կը  
ներկայացընեն : Խակ իրենց վաճաւա-  
կանութեան նաւերը Զինաց նաւերուն  
կը նմանին :

Արոպացի Ճանապարհորդներ կը գո-  
վեն Դաշնամի բժշկաց ու վիրաբու-  
ժից Ճարտարութիւնը։ Երևոր բժիշկ  
մը հիւանդի մը խնամք կը տանի, որուն  
բժշկութեանն համար ժամանակ պիտի

որոշէ , թէ որ առողջացընէ՝ առաջուց-  
մէ սահմանուած վարձը կ'ընդունի .  
իսկ թէ որ չյաջողի , թէ իր աշխատու-  
թիւնը և թէ իր գեղերուն գինը կը  
կորսնցընէ : — Վհառութեանց կողմանէ  
ստորին են քան զ<sup>ւ</sup>ինս և զՃաբոննե-  
րը . Ճարտասանութեան մասնաւոր յար-  
մարութիւն մը ունին , և ամենայն խը-  
նամով անոր կը պարապին , որովհետեւ  
անով կրնան ամենէն պատուաւոր պաշ-  
տօններուն հասնիլ : Մէջերնին յան-  
կարծախօս բանաստեղծներ կը գտնուի ,  
որ մէկէն 'ի մէկ ամբողջ թատրերգու-  
թիւններ կը շինեն բերնուց՝ ո և իցէ  
նիւթի վրայ : Ինալլուծութիւնը ան-  
ծանօթ է իրենց մէջ . աստեղաբաշխու-  
թեան ալ Զինաց չափ տեղեակ են .  
աստեղագիտութեան և աստեղաց ազ-  
դեցութեանը կը հաւտան : Հասարա-  
կաց դպրոցներ ունին որսոց մէջ բարոյա-  
կանի , քաղաքական և գիւղական տըն-  
տեսութեան , զինուորական արուեստի ,  
Ճարտասանութեան և բանաստեղծու-  
թեան դաս կը տրուի :

Այսկին ներքին վաճառականութիւնը բանուկ է . ջրանցք մը շինուած է մայրաքաղաքին մէջ , որ պարիսպներուն չորս կողմը կը պտըտի և այս ընդարձակ քաղաքին թաղերուն իրարու հետ հաղորդակցութիւնը կը դիւրացընէ : Ուրիշ ջրանցք մընալ հուէի գետը Ուուք-կողի գոգին հետ կը միացընէ : Ուայրաքաղաքին գլխաւոր շուկայն ընդարձակ փողոց մըն է՝ գրեթէ մղոն մը երկայնութեամբ . բայց խանութիւներուն մէջ հարուստ ապրանք չկայ . սովորական և գլխաւոր վաճառքնելն են ոսկեզօծ կամ գունաւոր թուղթ , որ կրօնական արարողութեանց և յուղարկաւորութեան հանդեմներուն համար շատ կը գործածուի . չինացի յախճաղակի՞ հասարակ տեսակէն . հովահարներ , գեղորացք , մետաքս և շղարշ , հասարակ կերպասէ պատրաստ զգեստներ , արմաւենուց տերեւէ գլխարկներ . բրինձ , բանջարեղէն ու պտուղներ : Այսկաթեղէն վաճառքնելը քիչ են . գամեր , կացիններ և քերիչ գործիներ միայն կը գըտ .

նուին . — Այսք և Շաբոնները մեծ վաճառականութիւն կ'ընեն այս երկրիս հետ :

### ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Պեղմիոյ երկրագործուրիւնը , ձարտարուրիւնն ու վաճառականուրիւնը :

Պեղմիոյ պետութիւնը , որ 8,580 քառակուսի մղոն տարածութիւն ունի , և 4,548,507 քնակիչ , շատ յառաջադէմ է այսօրուան օրս երկրագործութեան , ձարտարութեան ու վաճառականութեան մէջ : Առողջութեան գործունէութեամբը երկրագործութիւնը զարգացած է . ՚ի բաց առեալ այգեկութքը , ամէն տեսակ ցորենական արմբուաց և ընդեղինաց , կանեփի , կտաւի հունձքն առատ է . նոյնպէս իւղալից և ներկաբեր տունկերու , պտղոց , հռովարնի և ծխախոտի . և պարտիզանութեան մէջ ալ հողանտայի կը հասնի : Պախրէ , մեղու և շերամ կը մնուցանեն երկրին բոլոր ընդարձակութեանը մէջ . ի իւքսեմպուրկի ձիերը , անվերսական Կամբին ըսուած երկրին խաշնիքն և Պոտէն լերանց խոզերը անուանի են : Խակ ձկնորսութեան համար 200 նաւ ու նաւակ կը բանին անդադար ամէն տարի : Յնէպէտ փայտը քիչ է , բայց անոր տեղը կիզահողն <sup>1</sup> և քարածուիրը <sup>2</sup> կը ծառայեցընեն : Պեղմիա հարուստ է հանքերով . Լամուր , Լիէժ , Լիւքսեմպուրկ և Հէնոյ գաւառին գլխաւոր ձարտարութիւններէն մէկն է : Բամբակի ձեռագործին ամենէն մեծ գործարաններն են ՚ի Լանդ , Լոքերէն , Պիրւժ , Գաւրդիէ , Պալին , Շուվէն , Շնտէրլահդ , Դուրնէ , Պոնս և Պուլիկա . Լանդ քաղաքը միայն 80,000 հազարակամ բամբակի կտաւ վաճառքի կը հանէ ամէն շաբաթ . արևմտեան Ֆլանտրան տարին 80,000 ծրար կը պատրաստէ . բոլոր Պեղմիոյ մէջ գրեթէ 400,000 հիւսելու ասեղ , և 23,500 ոստայնի գործի կը բանին , զորոնք կը շարժեն 80 շոգեշարժ գործիքներ . և միայն այս ձարտարութեանս 170,000 գործաւոր կը զբաղին : Ա էրվիկրի , Լիէժի , Լիմպի պուրկի և Լուբրի չուխայի գործարանները , Հոտիմնի , Ադավլըլընի Քլանէլէ , այծէի , և այլ և այլ կերպասներու գործարանները 40,000 գործաւոր ունին . Ա էրվիկր քաղաքն ամէն տարի 110,000 չուխայի ծրար կը

բանի և յախճապակի հող , և այլ . ՚ի Աբա ալ հանքային ջրեր : Արչափ որ բնութեան հարստութիւններով ձոխացած է այս երկիրս , այն չափ մարդկային ձարտարութիւնն ալ զարմանալի աշխուժութեամբ իր օգտին ծառայեցուցած է զանոնք : Ա շոյ մշակութիւնը , որ 41,000 հեկտար տեղ բռնած է , ամէն տարի 18 միլիոն հազարակամ կու տայ , որոնցմէ ն միլիոն Դաղղիա . Անդիիա և Հողանտա կ'երթայ՝ 30 միլիոն ֆրանգի ամենքով : Դառըդրէ , Պիրւժ , Լանդ , Պիրւժսէլ , Պալին , Անվերսա և Դուրնէ քաղաքները կեղրոն են կտաւի գործարաններուն , որոնց մէջ 400,000 գործաւոր կ'աշխատին , և որոնցմէ ելած տարեկան 900,000 ծրարին <sup>1</sup> բերած շահը 100 միլիոն ֆրանգը կ'անցնի : Պիրւժի ժանիստանէրն ու դամասէնէրը , Պիրւժսէլի և Պալինի դանդէլանէրը բոլոր Լուրպայի մէջ հոչակաւոր են : Չուանամանութիւնն ու առագաստի պաստառներն Անվերսայի , Դերմոնտի և Հէնոյ գաւառուն գլխաւոր ձարտարութիւններէն մէկն է : Բամբակի ձեռագործին ամենէն մեծ գործարաններն են ՚ի Լանդ , Լոքերէն , Պիրւժ , Գաւրդիէ , Պալին , Շուվէն , Շնտէրլահդ , Դուրնէ , Պոնս և Պուլիկա . Լանդ քաղաքը միայն 80,000 հազարակամ բամբակի կտաւ վաճառքի կը հանէ ամէն շաբաթ . արևմտեան Ֆլանտրան տարին 80,000 ծրար կը պատրաստէ . բոլոր Պեղմիոյ մէջ գրեթէ 400,000 հիւսելու ասեղ , և 23,500 ոստայնի գործի կը բանին , զորոնք կը շարժեն 80 շոգեշարժ գործիքներ . և միայն այս ձարտարութեանս 170,000 գործաւոր կը զբաղին : Ա էրվիկրի , Լիէժի , Լիմպի պուրկի և Լուբրի չուխայի գործարանները , Հոտիմնի , Ադավլընի Քլանէլէ , այծէի , և այլ և այլ կերպասներու գործարանները 40,000 գործաւոր ունին . Ա էրվիկր քաղաքն ամէն տարի 110,000 չուխայի ծրար կը